

## ՀՀ Ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 3/6

26 հունվարի 2016 թ.

Քննարկվեց Ա/Ձ Մարիետտա Հովհաննիսյանի 25.12.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 31.08.2015 թ-ի թիվ 224 որոշման դեմ:

#### Ա/Ձ Մարիետտա Հովհաննիսյանի գանգատում բերված փաստարկները.

ՀՀ Ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության պետի կողմից քննարկվել է Ա/Ձ Մարիետտա Հովհաննիսյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը, որի արդյունքում 31.08.2015թ.-ին կազմվել է թիվ 224 որոշումը (այսուհետ նաև՝ Որոշում):

Որոշմամբ խախտում է արձանագրվել և վճարային պարտավորություններ առաջադրվել ընդհանուր 372.368 դրամի չափով:

Որոշումն ընդունվել է ՀՀ օրենսդրության խախտումներով, այդ թվամ՝ սխալ կիրառմամբ, ստորև բերվող հիմքերով ու հիմնավորումներով.

1. Մարիետտա Հովհաննիսյանը հաշվառվել է անհատ ձեռնարկատեր 13.11.1997թ.-ին (վկայականի համար՝ 01Ա041669, ՀՎՀՀ՝ 27814453, հասցե՝ Լենինգրադյան 48/5-14):

2. Մարիետտա Հովհաննիսյանը, վստահ լինելով, որ իր գործունեությունը՝ որպես անհատ ձեռնարկատեր, դադարեցվել է (քանի որ ժամանակին դրան ուղղված ներկայացրել է դիմում համապատասխան պետական մարմին) կրկին դիմում է ներկայացրել անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառում իրականացնող մարմին և 20.04.2009թ.-ին հաշվառվել է Ա/Ձ Մարիետտա Հովհաննիսյան (վկայականի համար՝ 01Ա140791, ՀՎՀՀ՝ 25300501, հասցե՝ Ավան, Հովհաննիսյան 25/1-29) տվյալներով:

«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ անձի որպես անհատ ձեռնարկատիրոջ հաշվառումը մերժվում է, եթե նա արդեն հաշվառված է որպես անհատ ձեռնարկատեր:

20.04.2009թ.-ին Ա/Ձ Մարիետտա Հովհաննիսյանին հաշվառելուց հետո վերջինս իր հարկային պարտավորությունները կատարել է բարեխիղճ և բոլոր հարկերը վճարել է ժամանակին, այդ թվում՝ սոցիալական ապահովության վճարի մասով, իսկ ինչ վերաբերում է 1997 թ-ին հաշվառված Ա/Ձ-ի սոցիալական ապահովության վճարին նման հանգամանքի մասին Մարիետտա Հովհաննիսյանը չէր կարող իմանալ և իմանալու դեպքում էլ նման հարկային պարտավորություն դնելն օրինաչափ լինել չի կարող, քանի որ անձը չի կարող միաժամանակ երկու անգամ հաշվառվել որպես անհատ ձեռնարկատեր, ուստի և չի կարող կրկնակի հարկվել սոցիալական ապահովության վճարի մասով:

Ելնելով վերոգրյալից, Ա/Ձ Մարիետտա Հովհաննիսյանը գտնում է, որ Որոշումը ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ սխալ կիրառմամբ, հետևապես առկա են

Որոշման անվավերության հիմքերը՝ նախատեսված «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով, ուստի, ղեկավարվելով նույն օրենքի 69-72-րդ հոդվածներով, գանգատաբերը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ֆինանսների նախարարության 31.08.2015թ.-ի թիվ 224 որոշումը:

Միաժամանակ, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասը, ձեռնպահ մնալ Որոշմամբ վճարման առաջադրված գումարի չափով գույքի և դրամական միջոցների գանձման և արգելադրման գործառույթյուններից:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով Ա/Ձ Մարիետտա Հովհաննիսյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 28.08.2015 թ-ի սոցիալական ապահովության վճարի գծով նրա չկատարված պարտավորությունները կազմում են 372.368 դրամ, այդ թվում՝ ապառք 240.000 դրամ, տույժ 131.368 դրամ:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 28.08.2015 թ-ին ընդունվել է թիվ 224 որոշումը Ա/Ձ Մարիետտա Հովհաննիսյանից 372.368 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Մարիետտա Հովհաննիսյանը 13.11.1997թ.-ին գրանցվել է որպես անհատ ձեռնարկատեր (գրանցման համարը՝ 271.02063), հաշվառվել է Մաշտոցի ՀՏ-ում (ՀՎՀՀ՝ 27814453):

Այսուհետև, ղեկավարվելով «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի դրույթներով Ա/Ձ Մարիետտա Հովհաննիսյանի վերաբերյալ համապատասխան տվյալները ներառվել են «Օրենքի ուժով լուծարվող (գործունեությունը դադարեցնող) անհատ ձեռնարկատերերի ցանկ»-ում (այսուհետ՝ Ցանկ) և Մաշտոցի ՀՏ պետի 03.07.2006թ-ի թիվ 2055 գրությամբ ուղարկվել են ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Մաշտոցի տարածքային բաժին՝ Ցանկում ընդգրկված անհատ ձեռնարկատերերի գործունեության դադարեցման գործընթացն իրականացնելու համար: Սակայն Մաշտոցի ՀՏ ներկայացուցիչները նշեցին, որ մինչ օրս Ա/Ձ Մարիետտա Հովհաննիսյանի գործունեության դադարեցման վերաբերյալ որևէ տեղեկատվություն չի ստացվել:

Տվյալ դեպքում հարկ է նշել, որ Ա/Ձ Մարիետտա Հովհաննիսյանի վերաբերյալ տվյալները Ցանկում ընդգրկվելու հանգամանքը վկայում է այն մասին, որ 03.07.2006թ-ի դրությամբ Ա/Ձ Մարիետտա Հովհաննիսյանը բավարարել է «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական

ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի պահանջներին և չի ունեցել որևէ չկատարված պարտավորություն:

Մարիետտա Հովհաննիսյանը վստահ լինելով, որ իր անվամբ գրանցված անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը սահմանված կարգով դադարեցվել է (լուծարվել է), նա դիմել է ՀՀ պետական ռեգիստր և, ըստ էության, կրկին անգամ 20.04.2009թ-ին գրանցվել է որպես անհատ ձեռնարկատեր (գրանցման համար 282.11209) և հաշվառման է կանգնել Նոր Նորքի ՀՏ-ում (ՀՎՀՀ 25300501): Այսինքն, Մարիետտա Հովհաննիսյանը 20.04.2009թ-ին որպես անհատ ձեռնարկատեր գրանցվելուց և Նոր Նորքի ՀՏ-ում հաշվառման կանգնելուց հետո ընկած ժամանակահատվածում սահմանված կարգով և ժամկետներում վճարել է նախատեսված բոլոր պարտավորությունները, այդ թվում՝ սոցիալական ապահովության վճարի գծով:

Տվյալ դեպքում Որոշմամբ սոցիալական ապահովության վճարի գծով պարտավորություններն առաջադրվել են 2009-2012 թ.թ. համար, այն դեպքում, երբ Ա/Ձ Մարիետտա Հովհաննիսյանը Նոր Նորքի ՀՏ-ում հաշվառման կանգնելուց հետո ընկած ժամանակահատվածում, որը նույնպես ընդգրկել է 2009-2012 թ.թ., վճարել է սոցիալական ապահովության վճարի գծով պարտավորությունները: Մասնավորապես, Որոշումը կայացվելու օրվա դրությամբ Ա/Ձ Մարիետտա Հովհաննիսյանը (ՀՎՀՀ 25300501), ըստ «Հարկատու 3» համակարգում առկա տվյալների, սոցիալական ապահովության վճարի գծով որևէ պարտավորություն չունի:

Վերոգրյալից հետևում է, որ Որոշմամբ սոցիալական ապահովության վճարի գծով գանձման առաջադրված պարտավորությունները հիմնավոր չեն, քանի որ նույն անձը, նույն ժամանակահատվածի համար սոցիալական ապահովության վճարի գծով պարտավորությունը կարող է վճարել միայն մեկ անգամ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Չեղյալ համարել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 31.08.2015 թ-ի թիվ 224 որոշումը:

2. ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ-ին՝

Հաշվի առնելով Ա/Ձ Մարիետտա Հովհաննիսյանի (ՀՎՀՀ 25300501) ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ-ում հաշվառված լինելու հանգամանքը, ձեռնարկել համապատասխան միջոցներ Մաշտոցի ՀՏ-ում որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված (ՀՎՀՀ 27814453) նույն անձի գործունեությունը դադարեցնելու (լուծարելու) ուղղությամբ:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ